



ՍՏԻՊՈՒԱԾ ԿԸ ԳՐԵՄ ԱՅՍ ՏՈՂԵՐԸ

Posted on May 4, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 23 Ապրիլ 2024

Բարեկամներ, հակառակ որ ես մեծցած եմ ՌԱԿ-ի համակիր մեծ-մօր, մեծ-հօր եւ այլ հարազատներու միջավայրի մը մէջ, շատ խանդավառ չեմ եղած ՌԱԿ-ով, որովհետեւ խառնուածքով ձախակողմեան եղած եմ, բայց ոչ համայնավար, փիլիսոփայութեան մէջ աւելի շատ հակուած եմ «մատերիալիզմին», ընդունելով միաժամանակ «իդեալիզմի» կարգ մը դրոյթները: 1968-ի Փարիզի ուսանողական ցոյցերուն եւ ընդվզումներուն մասնակցած եմ առաջին իսկ մէկ օրէն եւ առաջին շարքերու վրայ, որովհետեւ բարձրագոյն կրթութիւնը կը կառավարուէր յետադիմական եւ ազգայնամուլ խաւի մը կողմէ: Պատահական չէր որ տարի մը հազիւ անցած որոշեցի խորհրդային Հայաստան մեկնիլ բարձրագոյն կրթութեան համար: Իմ դաւանած սկզբունքներս զիս առաջնորդեցին գրականութեան, պատմութեան, մանկավարժութեան, հնագիտութեան եւ հասարակական գիտութիւններու բաժանմունքները: Շատեր, ներառեալ ընտանիքիս անդամներէն ոմանք չհաւնեցան ընտրութիւնս, որովհետեւ պետք է «տոխթոր» (տոքթոր-բժիշկ), «էնճեկոր» (ճարտարագետ), դեղագործ...եւ նման շահութաբեր ասպարեզ մը ընտրած ըլլայի...

Մասնագիտութիւնս զիս տարաւ Կիպրոսի ՀԲԸՄ-ի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն (13 տարի), ապա ԱՄՆ, ուր նոյնպէս «հացի աղբիւրս» եղաւ մանկավարժութիւնը, առաւել՝ լրագրութիւնը:

1981-1982 թուականներուն, երբ զգացի որ ՀԲԸՄ-ՌԱԿ-Հնչակեան-«Հայաստանասեր» ճակատը պետք ունի իմ ունակութիւններուն եւ նուիրումիս, դիմեցի երկրորդական վարժարանի մէջ ինծի տոմարակալութիւն եւ առեւտրական գիտելիքներ դասաւանդած բանաստեղծ ուսուցիչիս՝ Պրն. Վարուժան Պետիկեանին (տնօրէնուհի Սօսի Պետիկեանի ամուսինը), յայտնելով որ կը փափաքիմ Ռամկավար կուսակցութեան անդամագրուիլ, որովհետեւ ՌԱԿ-ը պետք ունի ինծի...

Այս ներածականը անհրաժեշտ գտայ շարադրելու, որովհետեւ ատենէ մը ի վեր կարգ մը անհատներ, որոնցմէ ոմանց գիտեմ, ոմանք ալ «մութի մէջ թաքնուած ընթերցողներ», զարմանքով կը կարդան եղեր իմ հակա-փաշինեանական եւ ԶՊ-ական զայրալից տողերս: Անոնցմէ ոմանք զայրացած են կամ սրտնեղած որ ես իբր թէ ՀՅԴ-ականներու նման անհարկի եւ «վիրաւորական» բառեր կը խառնեմ իմ ԴԻՄԱՏԵՏՐԻ (Facebook) էջերուն մէջ եւ ատիկա չի վայելեր եղեր ինծի պէս մէկու մը...

Կարգ մը ընթերցողներ ալ կ'ըսեն, թէ ռամկավար, «Նոր Օր»ի կարճ ատենուան մը խմբագիր եւ խմբագրական կազմի անդամ ու յօդուածագիր Մինասը (=Ընկ. Գոճայեանը) բառերը չի խնայեր, «սուր» քննադատութիւններ կ'ունենայ «ժողովուրդին մանտաթը» ստացած Ն. Փաշինեանի եւ ՀՀ պետութեան դէմ: Ու տակաւին քիչ մըն ալ յառաջ տանելով իրենց թիրիմացութիւնները, անձնական էջիս մէջ կատարած գրառումներս կը կարծեն թէ չի վայելեր ռամկավարի մը: Աւելի ճիշդ կ'ըլլայ, եթէ ըսեմ թէ՛

ումանք իմ անձնական գրառումներս եւ խօսքերս կ'ընդունին որպէս ՌԱԿ-ի խօսք...

Այս բացատրութիւններէն կամ մեկնաբանութիւններէն ՈՐԵԻԷ մէկը ՉԵՄ ԸՆԴՈՒՆԻՐ: Երբոր ռամկավար դարձայ Կիպրոսի մէջ, Պրն. Վ. Պետիկեան՝ մեր պաշտելի մտաւորական, գրող, կուսակցական եւ իմբազիր Անդրանիկ Անդրեասեանի ներկայութեան, ճիշդ որակաւորում մը տուաւ իմ մասին՝ ըսելով. «Մինասը ինծի նման ծախ ռամկավար է»: Այո՛, ես «ծախ ռամկավար» մըն եմ եւ քաղքենի մը չեմ:

Յիշեցնեմ թէ ՌԱԿ-ի արմատները կը սնանին յեղափոխական բայց ոչ արկածախնդիր Արմենականներէն: Ես այդպիսի ռամկավար մըն եմ: Հետեւաբար ինքզինքիս իրաւունք կու տամ քննադատել պարտաւորականութիւնը, քաղքենիութիւնը, աթոռապաշտութիւնը, պետութիւնն ու վարչակազմը կամ տիրող իշխանութիւնը շփոթողները, այլ խօսքով, այն պետական այրերը, որոնք կ'ըսեն. «Պետութիւնը Ե՛Ս եմ» (L'État, c'est moi) ես եւ իմ համար հարազատ Ազգային Ժողովրդավարական Բեւեռի ընկերներս, մենք ժողովրդավար ենք (դեմոկրատ), ռուսամետ չենք, բայց ռուսատեաց ալ չենք, արեւմտամետ ենք, բայց ոչ արեւմտապաշտ: Հետեւաբար, եթէ դիմատետրի Մինասը սուր որակաւորումներ տուած է ոչ միայն Ն.Փ.ականներու, այլեւ յաճախ նաեւ նախորդներու (կամ նախկիններու) հասցէին, ատիկա կու գայ Հայոց պատմութեան եւ մեր փորձառութեան ակունքներէն:

Եզրակացութիւն: Որոշ ատեն մը ՈՉԻՆՉ պիտի գրեմ Ն.Փ.ի եւ ԲՊ-ի դէմ, որպէսզի չնոյնացուին հասարակ մահկանացու Մինասն ու երբեմնի գործուն կուսակցական Ընկ. Մինասը: Համոզուած եմ սակայն որ իմ գրութիւններէս դժգոհներու վերապահութիւնը, չէզոք կեցուածքը եւ ծայրայեղ վախկոտ զգուշաւորութիւնը, «մենք հայրենի պետութեան թիկունք պետք է կենանք» մտածողները, օր մը պիտի զղջան, բայց ուշ պիտի ըլլայ:

Comments



Վարդի Դանիելեան varty.tanielian@gmail.com – 2024-05-10 10:44:48

Երանի թէ ձեզի պէս մտածողները աւելի յաճախականութեամբ արտայայտուին, որպէսզի նորագոյն սերունդը սկսի ճանչնալ եւ ըստ այնմ ընտրութիւն կատարել իր գաղափարական արեւելումներուն առնչութեամբ: Ձեզ իրապէս ճանչցողները, նաեւ՝ բոլոր գիտակից կուսակցականները, որոնք հեռու են ամբոխավարութենէ, կը հետապնդեն նոյն նպատակը, երբեմն՝ բոլորովին տարբեր միջոցներով, բայց բոլորը՝ ՄԷԿ են,: Շնորհակալ եմ ձեր նամակ-յօդուածին համար, յղելի՛ր բոլոր անոնց, որոնք կը կարծեն թէ ռամկավարութիւն համայնավարութեան հոմանիշն է: Տակաւին գործ ունիք կատարելիք, պարոն Գոճայեան - նորագոյն սերունդի դաստիարակութիւնը հասունացած մտաւորականներուն կարիքը ունի: Վարդի Դանիելեան